է. և առաք զգիր Թագաւորին Հապաշայ, Բադին Թագաւորին, կանգնեցաւ ի վերայ ոտիցն ամենայն զօրօքն հանդերձ համբուրեաց զգիրն և եդ ի վերայ գլխոյն։ Եւ կացաք անդ մինչև քարվանի երանելն. և Թագաւորն Բադին ետ մեզ մարդ, որ բերին զմեզ 'ի Մար։ Եւ 'ի գալն 20 աւուր ճանապարհ գետ ի վեր և անցաք զգետն. և Ժ. աւուր ճանապարհ, և եկաք Թագրար անցաք զգետն. և մինչև աեղս ամէնն շինութիւն է. և այս տեղէս մինչև Ը օրն եկաք 'ի Դուկլայ չօլով որ ջուր չկա. ջուր վերառաք Դուկլայու. Ի օր գետն ի վեր գնացինք, և այս տեղէս մինչև Իէ օրն հասաք 'ի Ալֆա. բայց 26 աւուր ճանապարհ 2 տեղ ջուր կայ որ ուխտերն կխմեն եւ ոչ մարդիկ. ջուր վերառաք. ամէնն չօլ է. ոչ բոյս կայ եւ ոչ ծառ. ամենն ավխտակ աւազ է որ ասեն ծով աւազ. եւ սատակեալ ըղտոց մարմինքն են նշան ճանապարհի։ Ալֆայ է երկիրն Թուրքաց Մարացոց իշխանութիւն են. Ալֆայու Ե օր չօլով եկաք 'ի Գանա. ջուր վերառաք Գուու ճայու Ը օրն հասաք 'ի Մար չէնութիւնք։ 'Ի Մարա Հապաշատան գնայն ծովով գնացաք և 'ի գալն ցամաքով եկաք. 'ի Թուին Հայոց ՌՃԻէ Սեպտեմբերի ԺԷ Մարու եղաք, եւ ի Թուին Հայոց ՌՃԻԹ